ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ք. Վանաձոր, Մ.Գոշի 6 *հեռ. 2-40-31*

«16» հոկտեմբերի 2012թ. *N – ԼԴ/0028/11/12*

ԿՏ 14293/12

ՀԵԼՄԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՄԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՄԵՆՅԱԿ» ՀԿ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Կ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Ուղարկվում է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 16.10.2012թվականի որոշումը:

Առդիր՝ որոշումը «5» թերթից:

ԴԱՏԱՎՈՐ՝ *Մ.ՄԵԼՔՈՆՅԱՆ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» հոկտեմբերի 2012թ. *ք.Վանաձոր*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ	*Մ.ՄԵԼՔՈՆՅԱՆ*
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ՝	*Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ*
ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝	
ԴԱՏԱԽԱԶ	*Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ*
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՀԿԳ ՔՆՆԻՉ	*Ն.ՕՍՅԱՆԻ*
«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ	*Ա.ՄԱՔՈՒՆՑԻ*
ՀԿ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ	*Կ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ*

Դռնբաց դատական նիստում քննության առնելով «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքը՝ ՀՀ Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ն.Օսյանի 26.04.2012թվականի «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» որոշումը վերացնելու պահանջի վերաբերյալ

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Կ.Թումանյանը դիմել է դատարան ՀՀ Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ն.Օսյանի 26.04.2012թվականի «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» որոշումը վերացնելու պահանջով:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահի 16.04.2012թվականի թիվ Ե/2012-16.04/144 գրության հիման վրա ՀՀ Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնում նախապատրաստվել են նյութեր:

26.04.2012թվականին ՀՀ Ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Ն.Օսյանը «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» որոշում է կայացրել, համաձայն որի՝ Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Մաքունցի կողմից Վանաձորի բաժին տրված հաղորդման վերաբերյալ նախապատրաստված նյութերով մերժել քրեական գործ հարուցելը՝ Մարգարիտա Խաչատրյանի և երթի մյուս մասնակիցների արարքներում հանցակազմի բացակայության հիմքով:

05.05.2012թվականին վերոգրյալ որոշումը «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Կ.Թումանյանի կողմից բողոքարկվել է վերադաս դատախազին, որը Լոռու մարզի դատախազության դատախազ Ա.Պողոսյանի կողմից 07.05.2012թվականի որոշմամբ մերժվել է:

21.05.2012թվականին «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Կ.Թումանյանը բողոք է ներկայացրել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան:

Բողոքը ներկայացվել է հետևյալ հիմնավորումներով.

2012 թվականի ապրիլի 26-ին Լոռու մարզի քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Ն.Օսյանը նախապատրաստված նյութերի արդյունքում կայացրել է «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» որոշում:

1.Գործի նախապատմությունը.

2012թվականի ապրիլի 16-ին «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի Գրասենյակ» հասարակական կազմակերպության /այսուհետ նաև Կազմակերպություն/ աշխատանքային տարածքի նկատմամբ տեղի է ունեցել հարձակում: Այդ փաստի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ոստիկանության քննչական բաժնի կողմից նախապատրաստվել է նյութեր:2012թվականի ապրիլի 16-ին տեղի ունեցած դեպքի վերաբերյալ քրեական գործ չհարուցելու փաստի վերաբերյալ 2012թվականի ապրիլի 27-ին բողոք է ներկայացրել Լոռու մարզի դատախազին: 2012թվականի ապրիլի 26-ին ՀՀ Լոռու մարզի քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Ն.Օսյանը նախապատրաստված նյութերի արդյունքում կայացրել է «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» որոշում: Նշված որոշման դեմ օրենքով սահմանված ժամկետում և կարգով բողոք է ներկայացրել Լոռու մարզի դատախազին: 2012թվականի մայիսի 07-ին Լոռու մարզի դատախազության ավագ դատախազ Ա.Պողոսյանը, քննարկելով Լոռու մարզի քննչական բաժնում կազմակերպության գույքը վնասելու և նույն կազմակերպության աշխատակցուհի Մարիետա Թեմուրյանի առողջությանը վնաս պատճառելու վերաբերյալ նախապատրաստված նյութերով կայացված որոշման դեմ ներկայացված բողոքը, այն մերժել է:

2.Որոշման պատճառաբանությունը.

2012թվականի ապրիլի 26-ին ՀՀ Ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Ն.Օսյանի կողմից կայացված որոշման հիմքը կայանում է հետևյալ փաստարկները.

Քրեական գործ հարուցելը մերժվել է այն հիմքով, որ Կազմակերպության կոտրած ապակիների արժեքը կազմում է 4800ՀՀ դրամ գումար, ուստի ապակիները դիտավորությամբ կոտրող Մարգարիտա Խաչատրյանի արարքում բացակայում է ՀՀ Քրեական օրենսգրքի 185հոդվածի հանցակազմը, իսկ Կազմակերպության աշխատակցուհի Մարիետա Թեմուրյանին պատճառվել է առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնաս, որը հանցանք չէ: Երթի մասնակիցների դիտավորությունն ուղղված չի եղել հասարակական կարգի կոպիտ ձևով խախտելուն, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք չի դրսևորվել, իսկ կազմակերպիչների և մասնակիցների գործողությունները պայմանավորված են եղել իրենց ազգային արժանապատվությունը պահելով: Ներկայացված բողոքի վերաբերյալ 2012թվականի ապրիլի 28-ին Լոռու մարզի դատախազության ավագ դատախազ Ա.Պողոսյանը որոշում է կայացրել միջնորդությունը մերժելու մասին: Միջնորդությունը մերժելու մասին որոշումը ևս կայացվել է այն հիմքով, որ Կազմակերպության կոտրած ապակիների արժեքը կազմում է 4800 ՀՀ դրամ գումար, ուստի ապակիները դիտավորությամբ կոտրող Մարգարիտա Խաչատրյանի արարքում բացակայում է ՀՀ Քրեական օրենսգրքի 185հոդվածի հանցակազմը, իսկ Կազմակերպության աշխատակցուհի Մարիետա Թեմուրյանին պատճառվել է առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնաս, որը հանցանք չէ: Երթի մասնակիցների դիտավորությունն ուղղված չի եղել հասարակական կարգը կոպիտ ձևով խախտելուն, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք չի դրսևորվել, կազմակերպիչների և մասնակիցների գործողությունները պայմանավորված են եղել իրենց ազգային արժանապատվությունը պահելով:

3. Բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Բողոքի քննության համար ներկայացվում է հետևյալ հիմքերը և փաստարկները.

1.Քրեական գործ հարուցելու համար առկա է օրինական առիթը և բավարար հիմքը.

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 175հոդվածի համաձայն՝ քրեական գործ հարուցելու սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 176հոդվածի համաձայն՝ քրեական գործ հարուցելու առիթներն են՝

1/ հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին.

2/ հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները./.../:

2012թվականի ապրիլի 16-ին Կազմակերպության աշխատանքային տարածքի նկատմամբ տեղի ունեցած հարձակման վերաբերյալ նախապատրաստված նյութերի հիման վրա կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա են քրեական գործ հարուցելու համար օրենքով նախատեսված երկու նախապայմանները՝

-առիթը, այսինքն հաղորդումը, որը սահմանված կարգով գրանցվել է,

-ինչպես նաև առկա են հիմքեր: Տվյալ պարագայում հիմքը կայանում է նրանում, որ տեղի է ունեցել կազմակերպված խմբի կողմից խուլիգանական հարձակում, խուլիգանություն կատարելու ժամանակ ենթադրյալ հանցագործություն կատարող կամ կատարողների կողմից դիտավորությամբ ոչնչացվել է գույք և անձի նկատմամբ կատարվել է բռնություն, ինչպես նաև բռնության սպառնալիք:

2. Նյութերի նախապատրաստման արդյունքում կայացված որոշման անհիմն լինելը.

Կայացված որոշումը ակնհայտ անօրինական է, չի բխում դեպքի փաստական հանգամանքներից, հիմնված չէ բավարար ապացույցների վրա, որի վերաբերյալ ներկայացնում է հետևյալ փաստարկները.

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 104հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական դատավարությունում որպես ապացույցներ թույլատրվում են.
1) կասկածյալի ցուցմունքները.
2) մեղադրյալի ցուցմունքները.
3) տուժողի ցուցմունքները.
4) վկայի ցուցմունքները.
4[1]) տվյալ գործի մեղադրանքի հետ առնչվող մեկ այլ քրեական գործով կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի ցուցմունքները,
5) դատապարտյալի ցուցմունքները.
6) փորձագետի եզրակացությունը.
7) իրեղեն ապացույցները.
8) քննչական և դատական գործողությունների արձանագրությունները.
9) այլ փաստաթղթերը:

Վկայակոչված նորմի մեկնաբանությունը թույլ է տալիս պնդելու, որ քրեական դատավարության կարգով քննվող դեպքերի փաստական հանգամանքները կարող են հերքվել կամ հաստատվել վերը թվարկված ապացույցի տեսակներով: Քննիչի որոշմամբ վկայակոչված է սույն նորմում թվարկված ապացույցներից ընդամենը երկու ապացույց, այն է եզրակացություններ և դեպքի վայրի զննության արձանագրություն: Ընդ որում, ապացույցներից առնվազն մեկը՝ դեպքի վայրի զննության արձանագրությունը վիճարկելի է, քանի որ կազմվել է օրենսգրքով սահմանված պահանջների խախտմամբ:

Նշված երկու ապացույցներով քննիչը գնահատել է արարքի հանցակազմի բոլոր չորս տարրերը և գտել, որ ենթադրյալ հանցագործություն կատարողների արարքներում հանցակազմը առկա չէ: Մինչդեռ, քննիչը պարտավոր էր հարուցել քրեական գործ, ձեռք բերեր օրենքով թույլատրելի և վերաբերելի ապացույցներ, քննության առներ դեպքի բոլոր հանգամանքները և յուրաքանչյուրին առանձին-առանձին, այնուհետև ամբողջությամբ տար իրավական գնահատական:

2. Քննիչի որոշման մեջ նշված է, որ ապակիները քարերով խփելու միջոցով կոտրել է Մարգարիտա Խաչատրյանը: Տվյալ փաստը իրականությանը չի համապատասխանում, քանի որ ոստիկանությանը տրամադրված տեսաձայնագրումից երևում է, որ առաջին քարը դեպի Կազմակերպության գրասենյակի աջ պատուհանը ժամը 11:09:40 վայրկյանին նետում է սպիտակ հագուստով երիտասարդ, որի արտաքինից երևում է, որ տվյալ երիտասարդը արական սեռի է: Հետևաբար որոշմամբ նշված փաստերը խեղաթյուրված են:

Բացի այդ, Կազմակերպությանը պատկանող մյուս գույքը ոչնչացնողին չի հայտնաբերել նյութեր նախապատրաստողը: Այս դեպքում անձը չպարզված արարք կատարողի արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը ինչպես է գնահատվել:

3. Քննիչի որոշմամբ նշված ՀՀ Վճռաբեկ դատարանի 2006թվականի հոկտեմբերի 24-ի թիվ ՎԲ-223/06 որոշումը սույն դեպքի համար կիրառելի չէ, քանի որ վկայակոչված գործի և սույն դեպքի հանգամանքները նույնական չեն:

<u>3. Նախապատրաստված նյութերով քննության առարկա չդարձված հանգամանքները.</u>

Քրեական գործ հարուցելը անհրաժեշտ է պարզելու և իրավական գնահատական տալու հետևյալ հանգամանքներին.

-Անհրաժեշտ է պարզել խուլիգանության հանցակազմի առկայությունը: Սույն դեպքում առկա է կազմակերպված խմբի կողմից կատարված խուլիգանություն: Հարկ է համարվում տեղեկացնել, որ բողոքի ակցիայի, բողոքի իրավունք ունեն բոլոր քաղաքացիները, սակայն այդ բողոքը պետք է ուղղված լինի ընդդեմ իշխանություն ունեցող մարմինների, այլ ոչ թե մասնավոր կազմակերպության: Կազմակերպությունը ունի սեփականություն և այն իրավունք ունի տնօրինելու, տիրապետելու իր հայեցողությամբ: Ոչ որ, այդ թվում հարձակմանը մասնակցած կամ հարձակումը կազմակերպած մարդիկ կամ մարմինները իրավունք չունեն խոչընդոտելու այդ իրավունքի իրացմանը: Սույն դեպքում առկա է հասարակության նկատմամբ բացահայտ արհամարհանք: Հասարակության անդամները չեն կարող դիտվել միայն հարձակմանը մասնակցած անձիք և իշխանություն ունեցող և պետական բյուջեից աշխատավարձ ստացող անձիք: Տվյալ պարագայում Կազմակերպության անդամները նրա շահառուները նույնպես հասարակության անդամներ են:

-Անհրաժեշտ է պարզել գույքը դիտավորությամբ ոչնչացնելու որակյալ հանցակազմի առկայությունը: Տվյալ պարագայում, ինչպես նշեց, չի պարզվել Կազմակերպության գույքի ոչնչացնողը: Բացի այդ, ինչպես երևում է նյութերում առկա տեսաձայնագրությունից, գույքի ոչնչացումը կատարվել է հանրափտանգ եղանակով: Այսինքն կատարողն իմանալով, որ գրասենյակում կան մարդիկ, քարը նետել է նրանց ուղղությամբ և արդյունքում վնասել նաև աշխատակցի առողջությունը: Գույքը ոչնչացվել է հասարակական պարտքը կատարելու կապակցությամբ: Կազմակերպությունը հասարակական է և կանոնադրության մեջ ներառված են տեղեկություններ, որ կազմակերպության գույքը պետք է օգտագործի հասարակական նպատակներով: Հետևապես Կազմակերպությունը ընդամենը կատարելով իր հասարակական պարտքը համաձայնություն է տվել այլ հասարակական կազմակերպությանը իր տարածքում ցուցադրել ֆիլմեր, որը կարծիքը արտահայտելու միջոց է: Եթե այն արգելված էր, ապա հանրապետության և մարդի

իշխանությունները պետք է արգելեին այն անձին ով ցանկանում էր այդ միջոցով ազատ արտահայտվել: Գույքի ոչնչացումը կատարվել է կրոնական մոլեռանդության շարժառիթով: Տվյալ պարագայում քննությունը պետք է իրականացվեր և պարզվեր, անձինք, որոնք հրապարակային վանկարկել են տարբեր տիպի վիրավորական արտահայտություններ, ինչքանով են տվյալ գործողություններն առնչվում կրոնական մոլեռանդության հետ, որը չի արվել:

-Անհրաժեշտ է պարզել նաև ցուցադրման նախապատրաստվող ադրբեջանական ֆիլմերի բնույթը, ֆիլմերի ձեռքբերման աղբյուրը, կազմակերպիչը, այն ցուցադրելու սահմանափակման սահմանադրական հիմքերի առկայությունը և տալ իրավական գնահատական:

-Անհրաժեշտ է պարզել կազմակերպվող կամ ցուցադրման նախապատրաստվող ֆիլմերի ցուցադրումը, դրա կապակցությամբ համացանցի և այլ եղանակով կատարված հայտարարությունները հավաքի ժամանակ հնչեցրած կարծիքներն իրենց մեջ ազգային կամ կրոնական թշնամանք հարուցելուն կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողություններ առկա են, թե ոչ: Առկայության կամ բացակայության պարագայում տալ իրավական գնահատական:

-Անհրաժեշտ է պարզել, ինչպես է Վանաձորի քաղաքապետարանում նույն օրը ժամը 9:00-ին մուտք եղել դիմում այն պայմաններում, որ կատարված հավաքի կամ միջոցառման կազմակերպման վերաբերյալ տեղական լրատվամիջոցներում վաղօրոք տարածվել է տեղեկատվություն, ֆիլմերի ցուցադրման վերաբերյալ: Այսինքն, այս դեպքում հիմքեր կան ենթադրելու, որ տեղի է ունեցել պաշտոնական կեղծիք՝ դիմումը հետին ամսաթվով մուտքագրելու միջոցով կազմակերպված հավաքը «օրինականացնելու» նպատակով:

-Անհրաժեշտ է քննության առարկա դարձնել նաև, թե Վանաձոր քաղաքի ոստիկանության բաժնի աշխատակիցները ինչ պատճառաբանությամբ և հիմքով չեն դադարեցրել հավաքը, տեսնելով, որ առկա է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված այլ անձի առողջությանը, կյանքին, ինչպես նաև գույքին սպառնացող վտանգ: Նման պարտականություն ոստիկանության համար սահմանված է «Հավաքների ազատության մասին» ՀՀ Օրենքի 34հոդվածով: Սույն դեպքում անհրաժեշտ է ոստիկանության աշխատակիցների անգործությանը քրեական գործով տալ իրավական գնահատական:

-Անհրաժեշտ է պարզել նաև, թե Լոռու մարզպետարանի աշխատակից քաղաքացիական ծառայողներն ինչ նպատակով են մասնակցել կազմակերպված հավաքին, այն պայմաններում, որ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ Օրենքի 24հոդվածի 1-ին մասի «դ» կետով նրանց արգելված է նման իրավունքը: Նշված նորմի համաձայն՝ քաղաքացիական ծառայողն իրավունք չունի իրականացնել քաղաքացիական ծառայողների քաղաքական գսպվածության սկզբունքի խախտումներ՝ իր ծառայողական դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի համար, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզել, ինչպես նաև իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնել:

Քննիչի անգործությունը վիճարկելու վերաբերյալ բողոքին ի պատասխան նյութերի նախապատրաստման նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի այն պատճառաբանությունը, թե հավաքներին մասնակցելը թույլատրվում է յուրաքանչյուր անձի, բացառությամբ օրենքով արգելված անձանց, ապա հարկ է համարում կրկին նշել, որ հավաքների ազատությունը թույլատրելի է ընդդեմ իշխանություն կրող մարմնի, այլ ոչ թե մասնավոր անձի: Իշխանությունն ունի օրենսդրությամբ սահմանված լիազորություններ մասնավոր անձի նկատմամբ քրեական կամ վարչական հետապնդում իրականացնելու այն արարքների համար, որոնք օրինաչափ չեն: Իշխանության ներկայացուցիչները լիազորություն չունեն մասնավոր կազմակերպության նկատմամբ միտինգներ, հավաքներ կամ բողոքներ կազմակերպել կամ իրականացնել:

-Անհրաժեշտ է պարզել նաև Կազմակերպության նկատմամբ կազմվել է արդյոք այնպիսի հասարակական միավորում, որը զուգորդվել է անձանց առողջությանը վնաս պատճառելով կամ սեփականության իրավունքների դեմ ոտնձգություններով, ինչպես նաև կազմակերպությանը իրենց քաղաքացիական պարտականություններից հրաժարվելուն դրդելով: Նման հանգամանքի առկայության պայմաններում տալ իրավական գնահատական:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 290հոդվածը «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Կ.Թումանյանը բողոք է ներկայացրել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով վերացնելու ՀՀ Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ն.Օսյանի՝ 26.04.2012թվականի «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» որոշումը:

Դատական նիստում «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Կ.Թումանյանը բողոքը պնդեց ամբողջությամբ, ավելացնելով, որ եթե սահմանադրական նորմով իրավունք է վերապահված ցույցեր, երթեր և հավաքներ կազմակերպելու, դա սահմանադրական իրավունքը կոչված է մարդու իրավունքը իրացնելու ընդդեմ պետական մարմնի և պետական մարմինը պարտավորություն ունի ապահովելու կամ չխոչընդոտելու որոշակի իրավունքներ, որոնք ապահովված են Սահմանադրության երկրորդ

գլխում: Այս դեպքում առհասարակ հավաք, ցույց իրականացնելու համար պետական մարմինը պարտավոր էր ամբողջությամբ փակելու այդ ցույցերի կամ ինչպես ասում են շտապ հավաքների մասնակիցների ընդհանրապես տեղաշարժը, եթե դա կատարվում է ընդդեմ մասնավոր սեփականության և երբևէ նման իրավունք չկա: Երթեր, ցույցեր չի կարելի անցկացնել երկու ինստիտուտի նկատմամբ՝ մասնավոր սեփականության և այդ իրավունքի իրացումից պաշտպանվում է նաև դատարանը: Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածում սահմանված է, որ զսպվածությունը պետք է լինի դատարանի նկատմամբ և մասնավոր անձի շահերին ուղղված, մնացած բոլոր դեպքերում թույլատրելի է իհարկե խաղաղ ցույցը, առանց քարերի: Երթերի, ցույցերի հանրահավաքների մասին օրենքում նշված է, որ ապահովում է սահմանադրական այն իրավունքը, որը վերաբերվում է մարդու կողմից բողոքի արտահայտմանը, այսինքն եթե մարդը ուզում է բողոքի, ապա իր իրավուքը պետությունը օրենսդրության միջոցով ապահովում է և այդ բողոքը կարող է ներկայացնի պետական մարմնին և այն մարմնին, որին հարկ է վճարում, որ աշխատավարձ ստանա և իր իրավունքը ապահովի: Բացի այդ նշեց, որ Եվրոպական կոնվենցիայում սահմանված այդ իրավունքը ապահովում է բոլոր մարմինների նկատմամբ, բացառությամբ երկու ինստիտուտի՝ մասնավոր և դատական համակարգի: Այս դեպքում ոստիկանությունը, եթե նման հայտարարություն կար, որն ուղղված է եղել որոշակի անձանց սեփականության իրավունքով պատկանող գույքի, գործողությունների, մտածողության դեմ ակցիա կազմակերպելուն, ապա նրանց տեղաշարժը պետք է սահմանափակվեր և ուղղվեր դեպի օրինակ ոստիկանություն, դատախազություն կամ մարզպետարան: Եթե ստորագրություններ է եղել և դատախազների մոտ անհանգստություն է եղել, ուստի դրանից առաջ պետք է թույլտվություն վերցնեին, որոշվեր երթի տեղը, ժամանակը, բայց շտապ հավաքի անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ շտապ իրավիճակ է ստեղծվում, որ պետք է մարդիկ շտապ հավաքվեն, բայց տվյալ դեպքում փաստորեն նախօրոք են իմացել երթի կազմակերպման մասին և հետևաբար «շտապ հավաք» այն չի կարող համարվել: «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Կ.Թումանյանը ավելացրեց նաև, որ «Ոսկե Ծիրան» 7-րդ երևանյան միջազգային կինոփառատոնի միջազգային խաղարկային մրցույթում գլխավոր մրցանակակիր է դարձել թուրք ռեժիսոր Ռեհան Էրդեմի «Կոսմոս» ֆիլմը, իսկ Երևանում կազմակերպվելիք 8-րդ ամենամյա «Ոսկե Ծիրան» միջազգային կինոփառատոնում ներկայացվելու է թուրք ռեժիսոր Նուրի Բիլգե Ջեյլանի հեղինակած «Մի ժամանակ Անատոլիայում» ֆիլմը:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Ա.Սաքունցը բողոքը պնդեց ամբողջությամբ, ավելացնելով, որ առաջին հերթին դեպքերի ժամանակագրության տեսանկյունից հայտնում է, որ մինչև ամսի 16-ին «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նկատմամբ հարձակումը արդեն իսկ ապրիլի 15-ին տարածված է եղել «Կոչ լոռեցիներին» հայտնի հայտարարությունը, որը ստորագրվել է հասարակական կազմակերպությունների կողմից, որոնք իրենց շարքերում ունեն նաև պետական պաշտոններ զբաղեցնող անձինք, որոնք միաժամանակ հանդես են գալիս նաև որպես հասարակական կազմակերպության ղեկավարներ, մասնավորապես ՌՀ պետ Կամո Հովհաննիսյանը, որը հանդես է գալիս ԵԿՄ կազմակերպության ղեկավար, Լոռու մարզպետարանի աշխատակիցներ՝ Խալաթյան Սամվել, մարզպետի խորհրդական Տիգրանը, իր հիշելով ևս երկու խորհրդականներ: Այսինքն պաշտոնատար անձանց մասնակցությամբ և ուղղորդմամբ է եղել այդ հայտարարությունը և քննիչը չի պարզաբանել, թե ով է եղել այդ հայտարարության նախաձեռնողը և ինչպես են այդ հայտարարությունը կազմել, որովհետև դա պետք է անպայման քննության առարկա դարձներ, քանի որ հայտարարության մեջ ուղղակի նշված է, որ թե ադրբեջանական ֆիլմերի ցուցադրման նախաձեռնողները և թե աջակիցները ուղղակի պատասխանատվություն են կրելու հետագա իրադարձությունների համար: Այսինքն այդ հատվածը արդեն իսկ սպառնալիք է եղել միջոցառման նկատմամբ: Նաև այդ ժամանակ հայտարարության մասին իմացել է գտնվելով Գորիս քաղաքում, որտեղ որպես փորձագետ հրավիրված է եղել պառլամենտական ընտրությունների ժամանակ տեղի դիտորդներին ուսուցանելու համար: Այնտեղ այդ հատվածը կարդալով, որ ամբողջ պատասխանատվությունը ընկնում է կազմակերպիչների և աջակցողների վրա, որը իր մոտ արդեն մտահոգություն է առաջացրել և 15-ի երեկոյան վերադարձել է Վանաձոր քաղաք: Ճանապարհին իրեն զանգահարել է Լոռու մարզի դատախազ պարոն Շահբազյանը և հայտնել է, որ ֆիլմի ցուցադրումը չլինի, որովհետև «իրավիճակ կա», որը կարող է այսպես կոչված վատ հետևանքներ ունենա: Բնականաբար ասել և ներկայացրել է, թե ինչի մասին է խոսքը և ասել, որ հետագա իրադարձությունների ամբողջ պատասխանատվությունը պետք է ընկնի իրավապահ մարմինների վրա, որովհետև իրենց կազմակերպություն դիմել է «Խաղաղասիրական կազմակերպություն Կովկասյան կենտրոն» ՀԿ-ի նախահաշ Գեորգի Վանյանը խնդրանքով, որ որպես հասարակական կազմակերպություն իրենք իրականացնում են գործունեություն, ծրագիր բրիտանական դեսպանատան աջակցությամբ: Բնական է, որ որպես մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություն, տվյալ դեպքում աջակցություն են ցուցաբերում մարդու իրավունքների պաշտպանությանը՝ առանձին քաղաքացիներին, բնական է, որ իրենց աջակցությունը պետք է հայտնեին նաև հասարակական կազմակերպությանը, որը ըստ օրենքի գրանցված է ՀՀ-ում, հասարակական կազմակերպության գործունեության անօրինականության կամ այդ կազմակերպու-

թյան կողմից մարդկության դեմ հանցագործությունների կամ այդ հասարակական կազմակերպության կողմից պատերազմի ագիտացիայի քրեորեն հետապնդելի որևէ արարքի նկատմամբ մեղադրանք չկա, այդ կազմակերպության նախագահի կամ անդամների նկատմամբ մեղադրանք չկա առաջադրված, այսինքն կազմակերպության գործունեության օրինականության հետ կապված որևիցե հարցադրում չկա, իսկ սահմանադրությամբ ասոսացիաների իրավունքի իրականացման տեսակետից պարտականությունը որը ընկնում է պետության վրա ապահովելու, այդ գիտակցմամբ իրենք բնականաբար աջակցել են կազմակերպությանը, որպեսզի իրականացնի իր միջոցառումը: 16-ի առավոտյան աշխատանքի մեջ են եղել և իմացել, որ մեծ խումբ է գալիս «Հայքի հրապարակից»: Նորից է կրկնում, որ արդեն 15-ին տարածված հայտարարությունը, նրա ստորագրողները և ոճը պետք է դառնար արդեն իրավապահ մարիններին քննության առարկա: Իրենց կազմակերպությունում ունեն տեսախցիկներ, որոնք գաղտնի չէ և փակցված է, որ «տարածքը նկարահանվում է» և գաղտնի լուսանկարում չի եղել: Այդ ամբողջ իրադարձությունը տեսանկարահանված է, որը տրամադրվել է նախաքննության մարմնին, որտեղ կան բոլոր իրադարձությունները և դեմքերը: Ի դեպ, որ ֆիլմի ցուցադրումը հետաձգվում է, իմացել է միայն այդ օրը առավոտյան ինտերնետային հաղորդագրությամբ՝ մինչև խմբի մոտենալը: Ինքը խմբին հայտնել է դրա մասին, սակայն պարզվել է, որ նրանց դա ընդհանրապես չի հետաքրքրում: Իրենց ներկայացուցիչ Կ.Թումանյանի կողմից դատարան ներկայացված բողոքից զատ ՀՀ իշխանության առջև հարց է բարձրացված ապահովելու ադրբեջանական ֆիլմերի անխափան ցուցադրումը որպես կարծիքի արտահայտման սահմանադրական իրավունքի նորմ: Այդ դեպքից հետո, կոնկրետ օրը չի հիշում թե երբ, իրեն զանգահարել է Լոռու մարզային ոստիկանության քրեական բաժնի պետ պարոն Ղազարյանն ու հայտնել է, թե երբ է ադրբեջանական ֆիլմերի ցուցադրումը նախատեսվում, և ասել է, որ գրություն են ստացել դատախազությունից ապահովելու ադրբեջանական ֆիլմերի ցուցադրումը, իսկ ինքը ասել է, որ դրա ցուցադրումը խափանվել է և չգիտի, թե կազմակերպիչը երբ է այն նախատեսում ցուցադրելու: Քննիչն իր որոշման մեջ նշել է, որ ազգային արժանապատվության զգացումից են մարդիկ հավաքվել կազմակերպության դեմ բողոքելու, բայց քրեական օրենսգրքում կա ազգային արժանապատվությունը նվաստացնելու կամ վիրավորելու հետ կապված նորմ և որևէ քաղաքացի դեռևս չի դիմել իրավապահ մարմնին, բայց քննիչը հորում է կատարել այնպիսի նորմի, որի վերաբերյալ բողոք չկա որևիցե քաղաքացու կողմից, դա արդեն իր կողմից դիտվում է որպես քննիչի կողմից կանխակալ վերաբերմունք: Քննիչը ընդհանրապես չի անդրադարձել հետևյալին. ՀՀ-ում կա միավորումների ազատության իրավունքը, տվյալ դեպքում ոտնձգություն է կատարվել ՀՀ Արդարադատության նախարարության կողմից գրանցված իրավաբանական անձի՝ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»-ի դեմ, ապա քննիչը չի անդրադարձել այն հարցին, որ երկիրը ունի պատասխանատվություն ապահովելու քաղաքացիների անվտանգությունը իրենց իրավունքների իրականացման հարցում, այն է կարծիքի, տեղեկությունների և մտքերի տարածումը: Եղել է ուղղակի խոչընդոտ այդ կարծիքի տարածման, հանձինս ֆիլմերի ցուցադրման հետ կապված, հետո քննիչը չի անդրադարձել այն հարցին, որ ոստիկանության աշխատակիցները՝ թվով մոտ քսան հոգի, որոնք խմբին ուղեկցել են «Հայքի» հրապարակից գրասենյակ, գտնվել են ոչ թե մասնակիցների և գրասենյակի միջև, այլ մասնակիցների մեջ, այնինչ պարտավոր էին համապատասխան միջոցներ ձեռք առնել ոչ միայն ցույցի անվտանգության ապահովման, այլ նաև ցույցի մասնակիցների կողմից բողոքը խորհրդանշող կազմակերպության ապահովման, շենքի մուտքի, այդ տարածքում գտնվող քաղաքացիների անվտանգության ապահովման համար: Քննիչի կողմից ուշադրություն չի դարձվել նաև ոստիկանության աշխատակիցների այդ պրոֆեսիոնալիզմի և պատշաճ պատրաստակամության պակասության հարցին, խոսքը վերաբերվում է օպերատիվ հետախուզական գործունեության օրենքի կատարման տեսակետին, այսինքն ինֆորմացիան իմացել են, թե ոչ, մանավանդ եթե Լոռու մարզի դատախազն է իրեն զանգահարում, այսինքն «դատախազի մակարդակով» արդեն տեղյակ են եղել հնարավոր իրադարձությունների մասին, որովհետև հենց իրենք են կազմակերպել: Ստորագրությունները հավաքվել են Լոռու մարզպետարանում, որը նույնպես չի բացահայտվել ով է հավաքել դրանք և ինչպես, ինչ եղանակով: Այսինքն կազմակերպիչների փաստը նույնպես բացահայտված չէ, իսկ ինքը պնդում է, որ դա իշխանությունն է կազմակերպել, հանձինս այդ պաշտոնատար անձանց, որովհետև իր ներկայացուցիչ Կ.Թումանյանը հայտարարեց, որ թուրքական ֆիլմերի հետ կապված որևիցե բողոք չի եղել, ավելին, «Եվրոտեսիլը», որը ցուցադրվում է և ՀՀ հանրային առաջին հեռուստատեսությամբ, որտեղ ուղղակի ցուցադրում են Բաքվի հրաշալի տեսարանները ադրբեջանական երաժշտությունը և ոչ մի ընդվզում չկա, որովհետև իշխանությունը եթե կազմակերպեր կլիներ, բայց եթե իշխանությանը, հանձինս հանրային հեռուստաընկերության տուգանել էին, բնականաբար նա բողոք կազմակերպելու մտադրություն չի ունեցել, որովհետև «կխայտառակվեր»: Ինչու համար է ինքը ասում, որ նման բողոքների բացակայությունը նման իրադարձությունների հետ կապված չի, դրանով հիմնավորում է, որ այս ակցիան կազմակերպված է եղել ոչ թե ադրբեջանական ֆիլմերի ցուցադրման դեմ, այլ ուղղված է իրավապաշտպան կազմակերպության գործունեության դեմ: Եթե մի կազմակերպություն բողոքարկում է ոստիկանության ապօրինի գործողությունները /բազմաթիվ դատական գործերի փաստով է ասում/, դատախազության ոչ պատշաճ որոշումները, ՏԻՄ-ի որոշումները, այսինքն պետական մարմինների կողմից քաղաքացիների նկատմամբ ոչ օրինաչափ գործողությունների հետ կապված իրենք աջակցություն

են ցույց տալիս քաղաքացիներին, բնականաբար նման պայմաններում ադրենալինային ֆիլմերի ցուցադրումը ընդամենը առիթ է եղել օգտագործելու կազմակերպության դեմ վրեժխնդիր լինելուն, բայց մոռանում են, որ ՄԱԿ-ի կողմից «13-25» հատուկ բանաձև կա, որ պետությունը պարտավորություն ունի ապահովելու իր տարածքում իրավապաշտպանական գործողություն իրականացնողներին: Այդ հարցերը նույնպես պատշաճ ուսումնասիրության չեն արժանացել քննիչի կողմից: Ի դեպ մարզպետարանի աշխատակիցը, հաղթանակից հետո, երբ խափանվում է ֆիլմի ցուցադրումը, շնորհակալություն է հայտնում հայրենի ոստիկանությանը, որ իրենց աջակցությամբ կարողանում են հասնել հաջողության, որի վերաբերյալ կա տեսանյութ: Հանցագործությունը բացահայտեցին, հանցագործությունը կանխեցին ըստ իրենց և ոստիկանությունը իրենց հովանավորեց, որը նույնպես քննության առարկա չի հանդիսացել քննիչի կողմից: Այսինքն ոստիկանության անգործության պայմաններում տեղի է ունեցել հանցագործություն և այն ոստիկանության ուղղակի հովանավորությամբ է տեղի ունեցել, որը քննության առարկա չի դառնում, քանի որ պաշտոնատար անձի կողմից է կատարվում, իսկ եթե սովորական քաղաքացու կողմից լիներ, ապա անմիջապես միջոցներ կձեռնարկեին: Այսպիսով գտնում են, որ պետք է քննիչի որոշումը քրեական գործ չհարուցելու մասին վերացվի, քրեական գործ հարուցվի և իրականացվի նոր օբյեկտիվ, բազմակողմանի քննություն: Իսկ այն կնոջը, որին 40000դրամ վարչական տուգանքի են ենթարկել քար նետելու համար, ապա նա տեսանյութում ընդհանրապես չկա որպես քար նետող ըստ տեսանյութի քարը ակնհայտորեն նետում է մի երիտասարդ: Այսինքն երիտասարդներին նման հանցագործությունների մեջ մղելով հարց է ծագում ով է կրելու պատասխանատվությունը:

Լոռու մարզի դատախազության դատախազ Ա.Պողոսյանը և Լոռու մարզի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ն.Օսյանը դատաքննությամբ խնդրեցին բողոքը մերժել, քանի որ 26.04.2012թվականի «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» որոշումը հիմնավորված է և օրինական:

2.Դատարանի իրավական վերլուծությունները.

Լսելով կողմերին, ուսումնասիրելով և գնահատելով ներկայացված ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ՝ դատարանը գտնում է, որ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքը՝ ՀՀ Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ն.Օսյանի 26.04.2012թվականի «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» որոշումը վերացնելու պահանջի վերաբերյալ պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

Դատաքննությամբ և գործի փաստական հանգամանքներով դատարանը հաստատված համարեց, որ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ղեկավարի հաղորդման հիման վրա ՀՀ Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնում նախապատրաստվել են նյութեր, որոնց հիման վրա 26.04.2012թվականին ՀՀ Ոստիկանության քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Ն.Օսյանը ղեկավարվելով ՀՀ Քրեական դատավարության 35հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» որոշում է կայացրել՝ Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Սաքունցի կողմից Վանաձորի բաժին տրված հաղորդման վերաբերյալ նախապատրաստված նյութերով մերժել քրեական գործ հարուցելը՝ Մարգարիտա Խաչատրյանի և երթի մյուս մասնակիցների արարքներում հանցակազմի բացակայության հիմքով:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 35հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ ենթակա է կարճման այն դեպքերում, երբ կոնկրետ անձի կողմից արարքը կատարելու փաստը պարզված է, սակայն այն մի շարք պատճառներով քրեական օրենքով նախատեսված չէ կամ չի գնահատվում որպես հանցագործություն.

- բացակայում է հանցակազմի հատկանիշներից թեկուզ և մեկը /օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտը, սուբյեկտիվ կողմը/,
- գործողությունը /անգործությունը/ միայն ձևականորեն է պարունակում ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքի հատկանիշները, սակայն իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում, այսինքն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանը էական վնաս չի պատճառել և չէր էլ կարող պատճառել /ՀՀ Քրեական օրենսգրքի 18հոդվածի 2-րդ մաս/,
- բացակայում են հանցակազմի առկայության ճանաչման համար օրենքով նախատեսված պայմանները /խոշոր չափը, ծանր հետևանքները, շահադիտական կամ այլ անձնական շահագրգռվածությունը և այլն/,
- քրեորեն պատժելի արարքը կատարվել է առանց մեղքի՝ անձը չի գիտակցել և տվյալ իրադրությունում չէր կարող գիտակցել իր գործողության /անգործության/ հանրության համար վտանգավոր բնույթը կամ չի նախատեսել հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը և տվյալ իրադրությու-

նում պարտավոր չէր կամ չէր կարող նախատեսել դրանք /ՀՀ Քրեական օրենսգրքի 31հոդվածի 1-ին մաս/,

- արարքը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում /ՀՀ Քրեական օրենսգրքի 42հոդված/, հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու /ՀՀ Քրեական օրենսգրքի 43հոդված/, ծայրահեղ անհրաժեշտության վիճակում /ՀՀ Քրեական օրենսգրքի 44հոդված/, ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի պայմաններում /ՀՀ Քրեական օրենսգրքի 45հոդված/, հիմնավորված ռիսկի գործադրման ժամանակ /ՀՀ Քրեական օրենսգրքի 46հոդված/, հրաման կամ կարգադրություն կատարելիս /ՀՀ Քրեական օրենսգրքի 47հոդված/, այսինքն կան արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներ և այլն:

Տվյալ դեպքում, վարույթն իրականացնող մարմինը հաղորդման վերաբերյալ նախապատրաստված նյութերով մերժել է քրեական գործի հարուցումը՝ Մարգարիտա Խաչատրյանի և երթի մյուս մասնակիցների արարքներում հանցակազմի բացակայության հիմքով, այսինքն պարզված չէ, թե ովքեր են երթի մյուս մասնակիցները, թե կոնկրետ ում կողմից ինչ արարք է կատարվել և կատարված արարքը ինչ պատճառներով քրեական օրենքով նախատեսված չէ կամ չի գնահատվում որպես հանցագործություն: Հետևաբար դատարանը բողոքի քննության արդյունքում հանգում է այն հետևության, որ «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» Լոռու մարզի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ն.Օսյանի 26.04.2012թվականի որոշումը վերացնելու պահանջի վերաբերյալ պետք է բավարարել՝ վերևում նշված հարցերի կապակցությամբ օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննություն կատարելու համար:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 185հոդվածի համաձայն՝

1. Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու դեպքում կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին (...):
2. Որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին:
3. Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով (...)
5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 185հոդվածը բովանդակում է հատուկ նորմ, որը հստակ կարգավորում է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման կարգը, դրա արդյունքում ընդունվող որոշումների շրջանակը, ինչպես նաև ընդունված որոշումների հետևանքները: Մասնավորապես, հիշատակված իրավանորմը սահմանում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Ընդ որում, բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից քրեական գործի հարուցումը: Այսինքն՝ քննարկվող իրավանորմը սահմանում է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման ինքնավար ընթացակարգ: ՀՀ քրեադատավարական օրենքում նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր և հատուկ նորմերի առկայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենսդիրը կոնկրետ իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր նորմերից, տվյալ դեպքում՝ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 278 և 290հոդվածներից առանձնացրել է այդ նույն իրավահարաբերությունը կարգավորող հատուկ նորմ՝ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 185հոդվածը՝ արդյունքում հստակեցնելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման դատական կարգն ու դրա արդյունքում դատարանի կողմից կայացվող որոշումը և նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր և հատուկ նորմերի առկայության դեպքում իրավակիրառողը պետք է կիրառի հատուկ նորմերը և չկիրառի ընդհանուր նորմերը: Նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ Վճռաբեկ դատարանն իր 2011թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0004/11/11 որոշման մեջ:

ՀՀ Սահմանադրության 5հոդվածի համաձայն՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա: Պետական (...) մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 7հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 23հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը:

Վերոգրյալի հիման վրա, դատարանը հանգում է հետևության, որ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Կ.Թումանյանի ՀՀ Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ն.Օսյանի 26.04.2012թվականի «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» որոշումը վերացնելու պահանջի վերաբերյալ բողոքը ենթակա է բավարարման՝ օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննություն կատարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 185հոդվածով դատարանը

ՈՐՈՇԵՑ

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքը՝ ՀՀ Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ն.Օսյանի 26.04.2012թվականի «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» որոշումը վերացնելու պահանջի վերաբերյալ, բավարարել:

Վերացնել Լոռու մարզի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ն.Օսյանի 26.04.2012թվականի «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» որոշումը:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վերաքննիչ քրեական դատարան հրապարակման պահից տասնօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Մ.ՄԵԼՔՈՆՅԱՆ